ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հոկտեմբերի 2019 թվականի N 396

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Անուշ Հովհաննիսյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. հոկտեմբերի 7-ի N 3980-Ֆ հայտը.

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Անուշ Հովհաննիսյանին (գրանցման համարը՝ 79.1005854) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Գ. Նժդեհի փողոցի թիվ 86 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 8
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2019 թվականի N 397

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-81-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարիի 19-ի թիվ 11 որոշումը և 2019 թվականի հոկտեմբերի 01-ին կայացած մրցույթի թիվ 4/1 արձանագրությունը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 0,0307 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0702-0116, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N09082019-09-0034) վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով, տարեկան 3532 (երեք հազար հինգ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել Մեղրի համայնքի բնակիչ Սաքո Խաչատրյանին՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով:

2.Ընդունել ի գիտություն, որ հողամասի վարձակալության իրավունքի մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սահմանել, որ.

1)վարձակալության իրավունք ձեռք բերող անձը պարտավոր է վարձավճարը վճարել հավասար չափերով ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը՝ Մեղրիի համայնքապետարանի 900305081052 հաշվարկային հաշվին.

2) վարձակալը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով.

3)վարձակալության իրավունքի մասին պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում է վարձակալության իրավունք ձեռք բերող անձի միջոցների հաշվին:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ Վանիկ Սարգսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2019 թվականի N 398

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-81-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարիի 19-ի թիվ 11 որոշումը և 2019 թվականի հոկտեմբերի 01-ին կայացած մրցույթի թիվ 5/1 արձանագրությունը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերից 0,4 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-037-0111-0054, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N09082019-09-0052) վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով, տարեկան 4800 (չորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել Մեղրի համայնքի բնակիչ Կարեն Մկրտչյանին՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով:

2.Ընդունել ի գիտություն, որ հողամասի վարձակալության իրավունքի մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սահմանել, որ.

1)վարձակալության իրավունք ձեռք բերող անձը պարտավոր է վարձավճարը վճարել հավասար չափերով ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը՝ Մեղրիի համայնքապետարանի 900305081052 հաշվարկային հաշվին.

2) վարձակալը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով.

3)վարձակալության իրավունքի մասին պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում է վարձակալության իրավունք ձեռք բերող անձի միջոցների հաշվին:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ Վանիկ Սարգսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2019 թվականի N 399

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-81-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարիի 19-ի թիվ 11 որոշումը և 2019 թվականի հոկտեմբերի 01-ին կայացած մրցույթի թիվ 6/1 արձանագրությունը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքերից 0,34116 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-053-0104-0002, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N24072019-09-0023) վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով, տարեկան 3850 (երեք հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել Մեղրի համայնքի բնակիչ Նարեկ Գրիգորյանին՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով:

2.Ընդունել ի գիտություն, որ հողամասի վարձակալության իրավունքի մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սահմանել, որ.

1)վարձակալության իրավունք ձեռք բերող անձը պարտավոր է վարձավճարը վճարել հավասար չափերով ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը՝ Մեղրիի համայնքապետարանի 900305081052 հաշվարկային հաշվին.

2)վարձակալը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով.

3)վարձակալության իրավունքի մասին պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում է վարձակալության իրավունք ձեռք բերող անձի միջոցների հաշվին:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ Վանիկ Սարգսյանը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2019 թվականի N 400

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-81-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարիի 19-ի թիվ 11 որոշումը և 2019 թվականի հոկտեմբերի 01-ին կայացած մրցույթի թիվ 7/1 արձանագրությունը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 0,03474հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0702-0115, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N06022019-09-0015) վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով, տարեկան 6264 (վեց հազար երկու հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել Մեղրի համայնքի բնակիչ Հրաչ Խաչատրյանին՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով:

2.Ընդունել ի գիտություն, որ հողամասի վարձակալության իրավունքի մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սահմանել, որ.

1)վարձակալության իրավունք ձեռք բերող անձը պարտավոր է վարձավճարը վճարել հավասար չափերով ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը՝ Մեղրիի համայնքապետարանի 900305081052 հաշվարկային հաշվին.

2)վարձակալը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով.

3)վարձակալության իրավունքի մասին պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում է վարձակալության իրավունք ձեռք բերող անձի միջոցների հաշվին:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ Վանիկ Սարգսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2019 թվականի N 401

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արթուր Արամի Աթանեսյանի՝ համայնքի ղեկավարին ուղղած 2019 թվականի հոկտեմբերի 7-ի N 3979 դիմումը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում Լեհվազ գյուղում գտնվող, Արթուր Արամի Աթանեսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,068 հա մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 1167835, կադաստրային ծածկագիր՝ 09-037-0057-0006) բնակավայրերի նշանակության հողամասին տրամադրել՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ. Լեհվազ 5-րդ փողոց թիվ 5/2» հասցե:
2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Արամի Աթանեսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2019 թվականի N 402

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N2387-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարին՝ 2019 թվականի հոկտեմբերի 4-ին ուղղած Նորիկ Հովհաննիսյանի թիվ 3955 դիմումը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, Նորիկ Ղևոնդի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 1167809) տրամադրել՝ Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի փողոց թիվ 5/8 հասցե:
2.Փոխել Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 5/8 հասցեում գտնվող 37,6 քմ մակերեսով տարածքի գործառնական նշանակությունը, որպես բնակելի նշանակության տարածք՝ բնակելի տուն:
3. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նորիկ Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2019 թվականի N 403

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի N2-Ն որոշման 8-րդ կետի.

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասում կատարել վերաբաշխում՝

1.Նվազեցնել <<Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում>> (01.01.01.51) ծրագրի <<Ապահովագրական ծախսեր>> (4215) հոդվածից 77000 (յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ և ավելացնել նույն ծրագրի՝ <<կոմունալ ծառայություններ>> (4213) հոդվածին:

2.Նվազեցնել <<ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)>> (01.06.01.51) ծրագրի <<մասնագիտական ծառայություններ>> (4241) հոդվածից 144000 (մեկ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ և ավելացնել նույն ծրագրի <<ապահովագրական ծախսեր>> (4215) հոդվածին:

3.Նվազեցնել <<Փողոցների լուսավորում>> (06.04.01.51) ծրագրի <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններին>> (4511) հոդվածից 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ և ավելացնել նույն ծրագրի <<էներգետիկ ծառայություններ>> (4212) հոդվածին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2019 թվականի N 404

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԵՎՈՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը և Լևոն Կարապետյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. հոկտեմբերի 9-ի N4010 հայտը.

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Լևոն Կարապետյանին (գրանցման համարը 79.713130) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի տարածք, մայրուղի 4/2 հասցեում գտնվող հեղուկ վառելիքի մանրածախ կետում թույլատրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 հոկտեմբերի 2019 թվականի N 405

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 11 որոշումը և 2019թ-ի հոկտեմբերի 8-ին կայացած աճուրդի թիվ 36/1 արձանագրությունը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող Լեհվազ գյուղում գտնվող 0.17158 հա, 0.0052 հա և 0,34438 հա (1 միավոր) գյուղատնտեսական նշանակության վարելահողը և ալ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-037-0101-0051, 09-037-0101-0080, 09-037-0101-0079) 299 667 (երկու հարյուր իննսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթած մասնակից Նարեկ Ղազարյանին՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:
2.Օրենքով սահմանված կարգով ապահովել վճարման ենթակա գումարի մուծումը (փոխանցումը) Մեղրիի համայնքապետարանի 900305081367 հաշվարկային հաշվին:
3.Լիազորել Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ Արտավազդ Արզումանյանին՝ աճուրդով գնված հողամասի վճարման ենթակա գումարի (սահմանված ժամկետում ու կարգով) վճարումը կատարելուց հետո, աճուրդում հաղթողի հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
4.Ընդունել ի գիտություն, որ անշարժ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը պետական գրանցման՝ անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:
5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի պետ Մ. Ղազարյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 10
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2019 թվականի N 406

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 11 որոշումը և 2019թ-ի հոկտեմբերի 8-ին կայացած աճուրդի թիվ 35/1 արձանագրությունը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող Լեհվազ գյուղում գտնվող 0.1759 հա, 0.34422հա և 0,27126 հա (1 միավոր) գյուղատնտեսական նշանակության վարելահողը և ալ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-037-0101-0054, 09-037-0101-0053, 09-037-0101-0081) 455 045 (չորս հարյուր հիսունհինգ հազար քառասունհինգ) ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթած մասնակից Հայկ Հայրապետյանին՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:
2.Օրենքով սահմանված կարգով ապահովել վճարման ենթակա գումարի մուծումը (փոխանցումը) Մեղրիի համայնքապետարանի 900305081367 հաշվարկային հաշվին:
3.Լիազորել Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ Արտավազդ Արզումանյանին՝ աճուրդով գնված հողամասի վճարման ենթակա գումարի (սահմանված ժամկետում ու կարգով) վճարումը կատարելուց հետո, աճուրդում հաղթողի հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
4.Ընդունել ի գիտություն, որ անշարժ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը պետական գրանցման՝ անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:
5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի պետ Մ. Ղազարյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 10
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2019 թվականի N 407

ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 21 հունվարի 2019թ <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին>> N3-Ա որոշման 13.5.8 կետի ս/թ հոկտեմբերի 15-ին Մեղրիի համայնքապետարանում անց է կացվելու հատուկ տակտիկական ուսումնավարժություն /այսուհետ ՀՏՈՒ/ << ՈՒժեղ երկրաշարժի ժամանակ Մեղրի համայնքի և ԱԻ հանձնաժողովի ազդարարում և հավաք>> թեմայով: Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով.
1) ղեկավարման շտաբի պետ՝ Վանիկ Սարգսյան.
2) շտաբի պետի տեղակալ, պլանավորման գծով՝ Արտավազդ Արզումանյան.
3) գործնական միջոցառումների խմբի ղեկավար՝ Արթուր Հայրապետյան:
2.ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝
1)Ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև հոկտեմբերի 10-ը ներկայացնել իմ հաստատմանը.
2)Կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի.
3)Գործնական միջոցառման խմբի ղեկավարին - ապահովել անվտանգության կանոնների պահպանումը մասնակիցների կողմից, կանոնների խախտման դեպքում անհապաղ դադարեցնել իրականացվող գործողությունները և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար.
4) ՈՒսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել ս/թ հոկտեմբերի 14-ին.
5)ՀՏՈՒ-ի անցկացումից 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:
3.Ուսումնավարժությունում ընդգրկել՝
1)Մեղրիի համայնքապետարանի ղեկավար կազմին և ԱԻ հանձնաժողովին.
2)Մեղրի համայնքապետարանի կազմավորումների հրամանատարներին:
4.ՈՒսումնավարժության մասնակիցներին՝
1) Համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով.
2) Պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին.
3) Խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:
5.Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:
6.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Մեղրի համայնքի ղեկավար Մ. Զաքարյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 10
ք. Մեղրի